***Աշխատանքի ծածկագիր 7228***

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ք.Երևան 26.11.2021թ.

Բողոքարկման հանձնաժողովը հետևյալ կազմով՝

նախագահությամբ՝ Ա.Ղուկասյանի

մասնակցությամբ անդամներ՝

Հ.Պետրոսյանի

Վ.Ենգիբարյանի

Բողոքարկման հանձնաժողովը (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) քննության առնելով քրեական մասնագիտացման դատավորների թեկնածուների ցուցակի արտահերթ համալրման նպատակով անցկացվող որակավորման գրավոր քննության արդյունքների դեմ բերված բողոքը,

## Պ Ա Ր Զ Ե Ց

Բողոքարկվել են քրեական դատավարություն բաժնի 13-րդ, 35-րդ հարցերը:

**<u>Քրեական դատավարության բաժին</u>**

**Հարց 35**

Հավակնորդը որպես ճիշտ պատասխան նշել է առաջադրվածներից բ/ տարբերակը, այն է՝ *անհրաժեշտություն է առաջացել պարզելու մահվան պատճառը և առողջությանը հասցված վնասի բնույթը և ծանրության աստիճանը:* Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 251-րդ հոդվածի 1-ին մասի ձևակերպումից երևում է, որ քննիչը համաձայն չլինելով

փորձագետի եզրակացության հետ՝ վերջինի ոչ լրիվ լինելու պատճառաբանությամբ **կարող է** նշանակել լրացուցիչ փորձաքննություն, հետևաբար <<կարող է>> եզրույթը չի կարող համարվել որպես <<պարտադիր>>: Նկատի ունենալով, որ խնդրի ձևակերպումը հնարավորություն չի տալիս միանշանակ հետևության հանգելու, որ հավակնորդի կողմից տրված պատասխանը սխալ է, ուստի Հանձնաժողովը գտնում է, որ այն պետք է դիտել, որպես ճիշտ պատասխան և Գնահատման հանձնաժողովի կողմից նշանակված 0 միավորը դարձնել 1 միավոր:

**Հարց 13**

Հավակնորդը որպես ճիշտ պատասխան է ընտրել առաջադրվածներից բ/ տարբերակը այն է՝ *այո, քանի որ դատավորը կաշկանդված չէ գործի մինչդատական վարույթում արված եզրահանգումներով,* մինչդեռ ներկայացվածներից ճիշտ տարբերակը դ-ն է, այն է՝ *ոչ, քանի որ դատավորն ունի կանխակալ կարծիք դատական քննության առարկայի (մեղադրանքի) վերաբերյալ,* քանի որ տվյալ դեպքում դատավորը բողոքի քննության արդյունքում անդրադարձել է անձին վերագրվող մեղադրանքի՝ խարդախության հանցակազմի հատկանիշներին, այդ իսկ պատճառով հավակնորդի կողմից նշված տարբերակը չի կարող համարվել ընդունելի:

## Ո Ր Ո Շ Ե Ց

Թիվ 7228 ծածկագրով աշխատանքի քննության արդյունքների դեմ բերված բողոքը մասնակիորեն բավարարել: Քրեական դատավարության բաժնի 35-րդ հարցերի պատասխանը գնահատել 1 միավոր:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ա.ՂՈՒԿԱՍՅԱՆ

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄՆԵՐ՝ Հ.ՊԵՏՐՈՍՅԱՆ

Վ.ԵՆԳԻԲԱՐՅԱՆ